

Հաստատում եմ

Ա.Սեդրակյան

(ստորագրություն)

«30» դեկտեմբերի 2008թ.
Կ.Տ.



ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**
Հասցեն **ք.Երևան, Մ.Խորենացու 3**

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը՝ Անշարժ գույքի ձեռքբերում (ք.Երևան, Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող «ԿանԱԶ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենք, 1812,4քմ ընդհանուր մակերեսով)
1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) **«ԿանԱԶ» ԲԲԸ**

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը **Թիվ**
Կնքման ամսաթիվը **30.12.2009թ**
Գործողության ժամկետը **Մինչև պայմանագրով ստանձնած կողմերի պարտականությունների ողջ ծավալով կատարումը**

Գինը՝ **181 618 000 (Մեկ հարյուր ութանասունմեկ միլիոն վեց հարյուր տասնութ հազար) դրամ:**

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ**

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը **ՀՀ կառավարության թիվ 1432-Ա որոշում**
Օրը, ամսաթիվը **Ուժի մեջ է մտել 15.12.2009թ**

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում

Անվանումը **Գործերի կառավարման վարչություն**

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության

բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ գնման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով որ դրա գինը չզերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

ՀՀ կառավարության 06.11.09թ. թիվ 1432-Ա որոշմամբ վարչական շենք(Երևան քաղաքի Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող՝ «ԿանԱԶ» ԲԲԸ-ին պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենք, 1812,4քմ ընդհանուր մակերեսով) ձեռք բերելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին 2009թ ընթացքում չորրորդ եռամսյակում հատկացվել է 181 618 000 (Մեկ հարյուր ութանասուներեկ միլիոն վեց հարյուր տասնութ հազար) դրամ՝ ՀՀ 2009թ պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների ձեռքբերում» հոդվածով):

Հաշվի առնելով վարչական շենքի գնման նպատակով գնման այլ ձևերի կիրառման ժամկետայնության հանգամանքը, գնման գործընթացը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անունը, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1	2	3	4
1	«ԿանԱԶ» ԲԲԸ	ք. Երևան, Գրիբոյեդովի 25	28.12.2009թ 34629-3/18

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

N	Անվանումը (անունը, ազգանունը)	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը
1	2	3	4
1	«ԿանԱԶ» ԲԲԸ	ք. Երևան, Գրիբոյեդովի 25	28.12.2009թ

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժել է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո

Ոչ

Մերժել է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո

Ոչ

Մերժել է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո

Ոչ

3.5. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո

Ոչ

4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիրատուն գնման գործընթացը.

Այո

Ոչ

5. Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո

Ոչ

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո

Ոչ

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անունը, ազգանունը ԱՆՆԱ ԱՆԱՆՅԱՆ

Պաշտոնը ԳՂ ԿԱ ՊԵԿ գնումների և շինարարության բաժնի առաջատար մասնագետ

Հեռախոսը /աշխ./ 594 697



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր Ի Կ Ո Մ Ի Տ Ե
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ձ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

STATE REVENUE COMMITTEE
OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF

0015 Երևան, Մ. Խորենացու 3
0015 Yerevan, M. Khorenatsi 3
Հեռ./Tel. +3741 59 43 01
Ֆաքս/Fax +3741 53 64 00

№ 34629-3/18 «28» 12 2009թ.

«ԿանԱԶ» ԲԲԸ

լուծարային հանձնաժողովի
նախագահ՝ Անգին Հակոբյանին

ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար ահրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «ԿանԱԶ» ԲԲԸ-ին պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենքը:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2009թ պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «ԿանԱԶ» ԲԲԸ-ն ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է:

1. դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
2. գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,
3. իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանգրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք գնման պայմանագրի նախագիծը:

Մ/Ծ փոխգնդապետ

Ա.Սեդրակյան

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
/Նախագիծ/

Հայաստանի Հանրապետություն , ք.Երևան

« » « » 09թ.

-----ի, որի անունից հանդես է գալիս լիազորված -----
/-----/ և Հայաստանի Հանրապետությունը ի դեմս „Հայաստանի
Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի
ղեկավար Աշոտ Սեդրակյանի, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան Մ.Խորենացու 3, որը գործում է
համաձայն կանոնադրության, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ Սեդրակ Վարդանյանը
/լիազորագիր 34879/18, տրված 29.12.09թ , անձնագիր AE 0234192 տրված 004, 25.03.1999թ./, այսուհետև
«ԳՆՈՐԴ» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում ք.Երևան, Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող «ԿանԱԶ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենքը,, 1812,4քմ ընդհանուր մակերեսով այսուհետ անշարժ գույք:
- 1.2 Սույն պայմանագրի 1.1. կետում նշված անշարժ գույքի ձեռքբերման ժամկետն է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 22.01.2010թ:
- 1.3 Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ ----- տրված ----- թիվ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ----- տարածքային ստորաբաժանման կողմից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Վաճառողը իրավունք ունի, եթե՝
 - 2.1.1. Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված Օբյեկտի համար՝ պահանջել վճարելու օբյեկտի համար նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:
 - 2.1.2. Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է Օբյեկտն ընդունելուց դրա համար վճարելուց իր ընտրությամբ պահանջել վճարել Օբյեկտի համար կամ հրաժարվելու պայմանագիրը կատարելուց:
- 2.2. Վաճառողը պարտավորվում է՝
 - 2.2.1 Պայմանագիրը կնքելուց 5 /հինգ/ օրացույցային օրվա ընթացքում, հանձնման - ընդունման ակտով Գնորդին փոխանցել Օբյեկտը:
 - 2.2.2. Օբյեկտը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը:
 - 2.2.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Օբյեկտ:
 - 2.2.4. Մինչև սույն պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Օբյեկտն առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները:
 - 2.2.5. Եթե երրորդ անձինք մինչև պայմանագրի կատարումը ծագած հայց են հարուցում Օբյեկտն առգրավելու մասին , Գնորդին մասնակից դարձնել գործի քննությանը:
 - 2.2.6. Նմուշով և / կամ/ նկարագրով Օբյեկտն վաճառելիս Գնորդին հանձնել նմուշին և /կամ/ նկարագրին համապատասխան Օբյեկտ:
- 2.3. Գնորդն իրավունք ունի՝
 - 2.3.1. Հրաժարվել սույն պայմանագրի կատարելուց, եթե վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված Օբյեկտը:
 - 2.3.2. Օբյեկտի պատկանելիքները և փաստաթղթերը սույն պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չհանձնելու դեպքում՝ հրաժարվել Օբյեկտից:
 - 2.3.3. Եթե վաճառողը Գնորդին հանձնել է սույն պայմանագրի 1-ին կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե Օբյեկտի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. Օբյեկտի նկատմամբ իրավունքը գրանցել է համապատասխան լիազոր մարմնում:

2.4.2. Վճարել Օբյեկտի արժեքը սույն պայմանագրի Յրդ կետում նախատեսված կարգով, ժամկետներում և գումարի չափով:

2.4.3. Վաճառողից Օբյեկտն ընդունել հանձնման-ընդունման ակտով:

2.4.4. Հանդես գալ որպես վաճառողի իրավահաջորդ՝ Օբյեկտի հետ կապված շահագործման և քաղաքաշինական բնույթի պարտավորություններում:

2.4.5. Հետագայում Օբյեկտն օտարելու դեպքում նախատեսել սույն պայմանագրի 2.4.4, կետում նշված պահանջների կատարումը նոր սեփականատիրոջ կողմից:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

3.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է Օբյեկտը ----- /----- / ՀՀ դրամ, պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները և հողի կադաստրային արժեքը :

3.2. Գնորդը Օբյեկտի դիմաց Վաճառողին վճարում է ՀՀ դրամով՝ անկանխիկ կարգով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

3.4. Պայմանագիրը կնքելու, ձևակերպելու և գրանցման հետ կապված ծախսերի համար վճարում է վաճառողը:

4. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ

4.1. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման:

4.2. Օբյեկտի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը ծագում է լիազոր պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքի գրանցման պահից, որը կատարվում է 30/երեսուն/օրվա ընթացքում

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՆԱՍԿԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5.2 Սույն պայմանագրի 3.1. կետում նախատեսված վճարի կետանցի դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,05 % տոկոսի չափով՝ մինչև-գումարի փաստացի վճարելը կամ սույն պայմանագրի լուծելը:

5.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.4. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Գնորդին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողսերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2. Կողմերի միջև հարաբերությունները դադարում են սույն պայմանագրի պայմանների և հաշվարկների լրիվ կատարման դեպքում:

7. ԱՆՀԱՐԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ /ՖՈՐՍ ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համա կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, որը

կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակալ: դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցները աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը, այդ մասն անխապեստեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Վաճառողը երաշխավորում է որ Գնորդին հանձնվող Օբյեկտը ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով /ներառյալ արգելանքը գրավը: Վաճառողը գնորդին վաճառում է երրորդ անձանց իրավունքից ազատ Օբյեկտ, այսինքն երրորդ անձինք Օբյեկտի նկատմամբ իրավունք չունեն:

8.2 Գնորդը, Օբյեկտը սեփականության իրավունք ձեռք բերելու պահից, իր հաշվին կատարում է անշարժ գույքի շահագործման հետ կապված ծախսերը:

8.3 ՀՀ «Գույքահարկի մասին» օրենքի 8 հոդվածի համաձայն նոր սեփականատիրոջն է անցնում օտարման պահի դրությամբ գույքի չմարած հարկային պարտավորությունները:

8.4 Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կամ պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով վավերացված նոտարի կողմից կամ դատարանի վճռով:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով ,4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ : Մեկ օրինակը պահվում է ----- նոտարական տարածքի գրասենյակում, մեկ օրինակը ներկայացվում է անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում:

Օրինակների միջև հակասության դեպքում անխապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂ

Գ Ն Ո Ր Դ

ԴԴ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Ս.Խորենացու-3

ԴԴ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ք/Ք 900011054054

ՔՎՔՔ 02591206

Լիազորված անձ՝

Ս.Վարդանյան

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

ՊՐՆ Ա.ՍԵՂՐԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սեղրակյան

Ի պատասխան Ձեր 28.12.09թ. թիվ 34629-3/18 գրության՝ սույնով հավաստում ենք, որ «ԿանԱԶ» ԲԲԸ ունի զննման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ,

- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝
 1. դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
 2. զննման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ ավյալներ,
 3. իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել զննման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից զննման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«ԿանԱԶ» ԲԲԸ-ն հայտնում է իր համաձայնությունը Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված ք.Երևան, Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող «ԿանԱԶ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենքը վաճառելու համար և վաճառքի գինը կկազմի 181 618 000 ՀՀ դրամ:



Ա. Չակոբյան

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն ք.Երևան երեսուցիմ ղեկտեմբերի երկու հազար ինը թվական

«Կանազ» ԲԲԸ -ն, գտնվելու վայրը ք. Երևան, Գրիբոյեդովի 25, ի դեմս լուծարային հանձնաժողովի նախագահ Անգին Յակոբյանի, այսուհետ «ՎԱՃԱՌՂ», և «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ», պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Աշոտ Սեդրակյանի, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան Մ.Խորենացու 3, որը գործում է համաձայն կանոնադրության, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ Սեդրակ Վարդանյանը /լիազորագիր 34879/18 տրված 29.12.09թ / անձնագիր AE 0234192 տրված 004, 25. 03. 1999թ., երկ . մինչև 25. 03 . 2014 թ - ը այսուհետև «ԳՆՈՐԴ» մյուս կողմից,

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿՄԱՆ

1.1 Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում ք.Երևան, Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող «Կանազ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենքը, 1812, 4քմ մակերեսով և հողամասը՝ 0 , 11933 հա այսուհետ անշարժ գույք:

1.3 Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին համաձայն անշարժ գույքի կադաստրի Ձեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից 17. 12 . 2008 թ տրված 2485710 սեփականության իրավունքի վկայականի :

Վաճառվող անշարժ գույքը կալանքի արգելանքի գրավի տակ չի գտնվում համաձայն անշարժ գույքի կադաստրի Ձեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից 28. 12. 2009թ. տրված թիվ 0221681 միասնական տեղեկանքի :

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վաճառողը իրավունք ունի, եթե՝

2.1.1. Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված Օբյեկտի համար՝ պահանջել վճարելու տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:

2.1.2. Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է Օբյեկտն ընդունելուց դրա համար վճարելուց իր ընտրությամբ պահանջել վճարել Օբյեկտի համար կամ հրաժարվելու պայմանագիրը կատարելուց:

2.2. Վաճառողը պարտավորվում է՝

2.2.1 Պայմանագիրը կնքելուց 5 /հինգ/ օրացույցային օրվա ընթացքում, հանձնման - ընդունման ակտով Գնորդին փոխանցել Օբյեկտը:

2.2.2. Օբյեկտը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը:

2.2.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Օբյեկտ:

2.2.4. Մինչև սույն պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Օբյեկտն առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները:

2.2.5. Եթե երրորդ անձինք մինչև պայմանագրի կատարումը ծագած հայց են հարուցում Օբյեկտն առգրավելու մասին , Գնորդին մասնակից դարձնել գործի քննությանը:

2.2.6. Նմուշով և / կամ/ նկարագրով Օբյեկտն վաճառելիս Գնորդին հանձնել նմուշին և /կամ/ նկարագրին համապատասխան Օբյեկտ:

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. Հրաժարվել սույն պայմանագրի կատարելուց, եթե վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված Օբյեկտը:

2.3.2. Օբյեկտի պատկանելիքները և փաստաթղթերը սույն պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չհանձնելու դեպքում՝ հրաժարվել Օբյեկտից:

2.3.3. Եթե վաճառողը Գնորդին հանձնել է սույն պայմանագրի 1-ին կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե Օբյեկտի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրից բխող իրավունքը գրանցել է համապատասխան լիազոր մարմնում:



2.4.2. Վճարել Օբյեկտի արժեքը սույն պայմանագրի Յրդ կետում նախատեսված կարգով, ժամկետներում և գումարի չափով:

2.4.3. Վաճառողից Օբյեկտն ընդունել հանձնման-ընդունման ակտով:

2.4.4. Հանդես գալ որպես վաճառողի իրավահաջորդ՝ Օբյեկտի հետ կապված շահագործման և քաղաքաշինական բնույթի պարտավորություններում:

2.4.5. Հետագայում Օբյեկտն օտարելու դեպքում նախատեսել սույն պայմանագրի 2.4.4, կետում նշված պահանջների կատարումը նոր սեփականատիրոջ կողմից:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

3.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է Օբյեկտը 181 618 000 /Մեկ հարյուր ութսունամեկ միլիոն վեց հարյուր տասնութ հազար / ՀՀ դրամ, պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները :

3.2. Գնորդը Օբյեկտի դիմաց Վաճառողին վճարում է ՀՀ դրամով, դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

3.3. Գնորդը սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարից ՀՀ կառավարության 06.11.09թ թիվ 1432-Ա որոշման համաձայն 70 000 000/յոթանասուն միլիոն/ ՀՀ դրամը փոխանցում է Վաճառողի պետական բյուջեից ստացված փոխառության մարմանը, 84 020 000 /ութանասունչորս միլիոն քսան հազար/ ՀՀ դրամը՝ հարկային պարտավորությունների մարմանը (այդ թվում 81 763 000 /ութսունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար / ՀՀ դրամը՝ որպես եկամտահարկ, 1 675 000 / մեկ միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճար /, իսկ մնացած 27 598 000 /քսանյոթ միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար/ ՀՀ դրամը փոխանցվում է Վաճառողի հաշվին:

3.4. Պայմանագիրը կնքելու, ձևակերպելու և գրանցման հետ կապված ծախսերի համար վճարում է վաճառողը:

4. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ

4.1. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման:

4.2. Օբյեկտի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը ծագում է լիազոր պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքի գրանցման պահից, որը կատարվում է 30/երեսուն/օրվա ընթացքում

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՆԱՍՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5.2 Սույն պայմանագրի 3.1. կետում նախատեսված վճարի կետանցի դեպքում Գնորդը Վաճառողին վճարում է տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,05 % տոկոսի չափով՝ մինչև-գումարի փաստացի վճարելը կամ սույն պայմանագրի լուծելը:

5.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.4. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Գնորդին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

դով,
գործման և
կետում
անասունների
նկային
1432-Ա
դրամը
դրկու
գար/
ոք
մ է
մ
մ

6.2. Կողմերի միջև հարաբերությունները դադարում են սույն պայմանագրի պայմանների և հաշվարկների լրի կատարման դեպքում:

7. ԱՆՀԱՂՈՒՄԱՆ ԱՊՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համա կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակալ: դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցները աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սու պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը, այդ մասը նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 վաճառողը երաշխավորում է որ Գնորդին հանձնվող Օբյեկտը ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով /ներառյալ արգելանքը գրավը: Վաճառողը գնորդին վաճառում է երրորդ անձանց իրավունքից ազատ Օբյեկտ, այսինքն՝ երրորդ անձինք Օբյեկտի նկատմամբ իրավունք չունեն:

8.2 Գնորդը, Օբյեկտը սեփականության իրավունք ձեռք բերելու պահից, իր հաշվին կատարում է անշարժ գույքի շահագործման հետ կապված ծախսերը:

8.3 ՀՀ «Գույքահարկի մասին» օրենքի 8 հոդվածի համաձայն նոր սեփականատիրոջն է անցնում օտարման պահի դրությամբ գույքի չմարած հարկային պարտավորությունները:

8.4 Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կամ պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով վավերացված նոտարի կողմից կամ դատարանի վճռով:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Մեկ օրինակը պահվում է Արարկիր նոտարական տարածքի գրասենյակում, մեկ օրինակը ներկայացվում է անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում:

Օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂ

ԳՆՈՐԴ

«Կանազ» ԲԲԸ

ԴԴ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

թ. Երևան, Մ.Խորենացու-3

ԴԴ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Դ/Դ 900011054054

ԴԿԴԴ 02591206

լիազորված անձ



Պ. Երևան, Գրիբոյեդովի 25

ՖԻՆԵԿՈՒՆԱՆՍԻ ՓԲԸ

ԴԴ 205002300312

ԴԿԴԴ 00000688

Լուծարարի հանձնաժողովի նախագահ՝

[Signature]
Ա. ՀԱԿՈՐՅԱՆ
Ն. ԿՈՂՄԵՐ

[Signature]
Վեդրատ Լյուցիանով



Երկու հազար ինը թվականի դեկտեմբերի երեսունին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ Երևանի Արաբկիր նոտարական տարածքի
նոտար Կարինե Ադամյանի կողմից :
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած
անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես և օտարվող գույքի նկատմամբ
„ Կանազ ԲԲԸ -ի իրավունքները և լիազորված անձի լիազորությունները ստուգված են :
Համաձայն ՀՀ քաղ. օր – ի 563 հոդվածի սույն պայմանագրից ծագող իրավունքները
ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
համապատասխան ստորաբաժնում 30 / երեսուն / օրվա ընթացքում :



Հանձնված իմ ներկայությամբ 7893
Գրանցված կադաստրի պետական տուրք և ծառայության վճար



4091236



Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կնքված պայմանագրի մասին

/Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն/

2009 թվականի դեկտեմբերի «30»-ին պատվիրատուի

/Պայմանագրի կնքման տարեթիվը, ամիսը և օրը/

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

/Պատվիրատուի անվանումը/

որը գտնվում է

Ք.Երևան, Մ.Խորենացու-3

հասցեում և կատարողի

/Պատվիրատուի գտնվելու վայրը՝ հասցեն/

«ԿանԱԶ» ԲԲԸ

/Կատարողի անվանումը, անունը, ազգանունը/

որը գտնվում է

ք. Երևան, Գրիբոյեդովի 25

/Կատարողի գտնվելու վայրը՝ հասցեն/

հասցեում, միջև կնքվել է Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր

/Պայմանագրի անվանումը/

գնման պայմանագիր /այսուհետև՝ պայմանագիր/:

Գնման առարկա է հանդիսանում՝ Անշարժ գույքի ձեռքբերում (ք.Երևան, Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող «ԿանԱԶ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող մարզական համալիրի կենցաղային մասնաշենք, 1812,4քմ ընդհանուր մակերեսով)

/Գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը/

Պայմանագրի գինը կազմում է 181618000 /Մեկ հարյուր ութանասունմեկ միլիոն վեց հարյուր տասնութ հազար) դրամ:

/Թվերով և տառերով/

Գնումները կատարվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար

/Գնման անհրաժեշտության համառոտ նկարագիրը/

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն Մեկ անձից գնում կատարելու ձևով

/Գնումը կատարելու ձևը/

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

/Պատվիրատուի անվանումը/



«30» դեկտեմբերի 2009թ.